



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Սեպտեմբեր 2018, թիվ 9 (121)

Խմբագրական

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԸ ԲԱՂԱՔԱԿԱՄՆ Է, ԹԵ՞ ՈՉ...

Ընթերցողին ներկայացվող թեման վերջին շրջանում կարծես թե ավելի է արդիական դառնում: Համայնքի ղեկավարի ընտրությունների ժամանակ թեկնածուներն առավել հաճախ են բարձրաձայն հնչեցնում այն միտքը, թե «համայնքի ղեկավարը քաղաքական պաշտոնն չէ... ևս պետք է համայնքը մաքրի, լուսավորություն քաշի, փողոցները ասֆալտապատի... Ի՞նչ քաղաքականության մասին կարող է խոսք լինել»:

Իհարկե, սա տեսակետ է եւ իրավունք ունի գոյություն ունենալու: Սակայն պարզաբանման համար միայն նշենք, որ «Հանրային ծառայության մասին» (ընդունվել է 23.03.2018թ.) ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝ համայնքային պաշտոնները դասակարգվում են քաղաքական, վարչական եւ հայեցողական պաշտոնների, իսկ 5-րդ հոդվածի 3-րդ մասով համայնքային քաղաքական պաշտոններ են սահմանվում համայնքների ղեկավարների եւ նրանց տեղակալների, ինչպես նաեւ համայնքի ավագանու անդամի պաշտոնները:

Ինչպես տեսնում ենք, նույնիսկ օրենսդրությունն է համայնքի ղեկավարին անմիջականորեն կապում քաղաքականության իրականացման հետ: Ուստի ո՞րն է պատճառը, որ համայնքի ղեկավարները (կամ թեկնածուները) տարիներ շարունակ խուսափում են իրենց անվանել քաղաքական պաշտոնյաներ:

Պատճառները թերեւս մի քանիսն են: Առաջին եւ ամենազխիսավոր պատճառն այն է, որ տարիներ շարունակ ՀՀ-ում քաղաքականությունն ու կուսակցականությունը նույնականացվել են, եւ բնակչության մոտ հստակ տարբերակում չի ձեւավորվել այս երկուսի վերաբերյալ: Տեսնելով, որ այս կամ այն կուսակցությունը չունի համատարած վստահություն եւ աջակցություն բնակչության շրջանում՝ համայնքի ղեկավարները մշտապես խուսափել են իրենց ներկայացնել կուսակցական շարքերում, չեն ցանկացել ասոցացվել որեւէ կուսակցության հետ:

Ավաճող առավել վառ արտահայտվեց Երեւանի ավագանու վերջին ընտրությունների քարոզարշավի ժամանակ, երբ թեկնածու քաղաքական ուժերից մեկի ներկայացուցիչը հայտարարեց, թե իրենք չեն գնում որեւէ քաղաքական պաշտոն գրառեցնելու:

Իրականում համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի պաշտոնը հենց քաղաքական պաշտոն է, եւ դա արտահայտվում է թեկուզ այն ժամանակ, երբ համայնքին վերաբերող գործունեություն իրականացնելիս վերջիններս մի քանի հնարավոր տարբերակներից ընտրում են միայն մեկը: Այս ընտրությունն է հենց քաղաքականության իրականացումը (աշխատանքը իրականացնում ենք այս ճանապարհով, այլ ոչ թե մյուս):

Ավելին, քաղաքականության եւ կուսակցականության շփոթության ակնառու դեպքեր են գրանցվել հենց Ազգային ժողովում, երբ հնաբնակ պատգամավորներից մեկի կողմից հնչել է տեսակետ, թե «պետք չէ քաղաքականացնել ԱԺ ամբիոնը»: Ակնհայտ է, որ ՀՀ Ազգային ժողովը քաղաքական մարմին է, որտեղ իրենց քաղաքականությունն են վարում կուսակցությունները:

Երկրորդ պատճառը, թերեւս, Հայաստանում ձեւավորված կուսակցականության ավանդույթներն են, երբ կողմ լինելով որեւէ կուսակցության՝ ինքնաբերաբար դառնում ես դեմ մյուսներին: Հետեւաբար, համայնքի ղեկավարները շատ դեպքերում խուսափում են ամեն հարմար առիթի ի ցույց դնել կուսակցական լինելու փաստը՝ համայնքում հնարավոր այլ կուսակցական պատկանելություն կամ հարում ունեցող ընտրազանգված չկորցնելու համար:

Որպես հաջորդ պատճառ կարող ենք դիտարկել որեւէ կուսակցության կողմից համայնքի ղեկավար առաջադրվելու եւ ընտրություններին նրանց կողմից աջակցություն ստանալու փաստը: Հաճախ, բացի տվյալ կուսակցության անդամ լինելուց կամ նրանց կողմից առաջադրված լինելուց՝ համայնքի ղեկավարի թեկնածուն այլ «արժանիքով» աչքի չի ընկնում, իսկ սատարող կուսակցությունն էլ, մեղմ ասած, բարձր վստահություն եւ աջակցություն չունի տվյալ համայնքի բնակիչների մոտ: Ուստի վերջիններս մշտապես փորձում են իրենցից հեռու պահել «քաղաքականություն» կամ «կուսակցություն» բառերի հետ կապված ցանկացած խոսակցություն:

Հետեւապես, թյուր պետք է համարել այն տեսակետները, թե համայնքի ղեկավարի պաշտոնը քաղաքական չէ: Միանշանակ, այն քաղաքական է՝ եւ՛ օրենքով սահմանված, եւ՛ պրակտիկ գործունեության բովանդակությամբ:

ՏԻՄ-ԲՅ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱԿՈՐ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ



Սեպտեմբերի 17-ին ՀամաՏեղ ծրագրի թիմի անդամները եւ ծրագրի գործընկերներն ու շահառուները հավաքվեցին Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) գրասենյակում՝ ՏԻՄ-քաղաքացիական հասարակություն համագործակցության հնարավոր ձեւերն ու մեխանիզմները քննարկելու նպատակով: Միջոցառման հիմքում ընկած էր ԵՀՀ կողմից իրականացված «Տեղական ինքնակառավարման մարմինների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության հեռանկարները. միջազգային փորձը եւ դրա տեղայնացման հնարավորությունները Հայաստանում» թեմայով որակական հետազոտությունը, ինչպես նաեւ համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) թիմի կողմից կատարված նույն խնդրի վերաբերյալ հայաստանյան օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը:

էջ 5 →

ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՁԱՅՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Որպեսզի բնակիչների ձայնը լսելի լինի

Ինչպես արդեն տեղեկացրել ենք («Համայնք-ՀամաՏեղ», փետրվար 2018, թիվ 2 (114), սույն թվականի մարտի մեկին մեկնարկել է Եվրոպական Միության ֆինանսավորմամբ՝ «Քաղաքացիների ձայնը եւ գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագիրը, որն իրականացվում է երեք գործընկեր կազմակերպությունների՝ Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ), Հայաստանի համայնքների միության եւ Տեղական ժողովրդավարության եվրոպական ասոցիացիայի (ALDA) կողմից: ՀՖՄ-ն ծրագրի իրականացման առաջնորդ կազմակերպությունն է: Ծրագիրը միտված է տեղական մակարդակում կարողությունների հզորացմանը՝ համայնքներում մարդակենտրոն եւ կայուն տեղական զարգացման ծրագրեր նախագծելու եւ իրականացնելու համար: Ծրագրի թիրախ են հանդիսանալու թե՛ տեղական իշխանությունները, որոնք ձեռք կբերեն հմտություններ՝ բնակչությանն արդյունավետորեն ընդգրկելու ծրագրերի մշակման եւ իրականացման գործընթացում, թե՛ հենց բնակիչները, որոնք ակտիվորեն ներգրավված կլինեն տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացներում:

Ծրագրի տեւողությունը 2,5 տարի է: Օգոստոսի 10-ին տեղի ունեցավ հանդիպում «Քաղաքացիների ձայնն ու գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի շահառու համայնքների ղեկավարների հետ:

էջ 6 →

ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳԻՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ԵԶՐԱԳԾԻՆ

Ամփոփվեցին չորրորդ ծրագրային տարվա աշխատանքները



2014 թվականին մեկնարկեց ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների գործընթացում հանրային մասնակցության աստիճանը: Հնգամյա այս ծրագրի իրագործման պատասխանատվությունը ստանձնեցին Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ-ն (ՀՖՍ), Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը (ՏՅԿԿ), Երեսնի մամուլի ակումբը (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ապարեգ» ակումբը (ԺԱԱ), «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը (ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոնը (ՀՌԿԿ):

ՀամաՏեղ ծրագրի 4-ամյա գործունեության ընթացքում իրականացված բազմաթիվ գործողությունները, միջոցառումներն ու ծրագրերը ուղղված են եղել տեղական ինքնակառավարման համակարգում հանրային մասնակցության մակարդակի բարձրացմանը և վերջինիս հետ կապված հարցերի կանոնակարգմանը, մասնակցության գործիքների ներդրմանը, դրանց փորձարկմանը և ստացված արևելահայկալի լայնորեն տարածմանը: Այդուհանդերձ, բոլոր գործողությունները իրականացվել են համընկերության 6 կազմակերպությունների սերտ համագործակցությամբ, ինչի արդյունքում կազմակերպությունների փոխգործակցությունը բարձրացել է որակապես նոր մակարդակի:

Սեպտեմբերի 19-20-ին համընկերության կազմակերպությունները և նրանց անդամները հավաքվել էին Ծաղկաձորում՝ ամփոփելու ծրագրային չորրորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքները և պլանավորելու հինգերորդ տարվա անելիքները:

Արտագրասենյակային հավաք-հանդիպման մեկնարկին բացման խոսքով հանդես եկավ ՀամաՏեղ ծրագրի ղեկավար Վահան Մովսիսյանը:

Բանախոսը նաեւ տեղեկացրեց, որ հուրախություն համընկերության անդամ կազմակերպությունների, ՀամաՏեղ ծրագրին տրվել է մեկ հավելյալ բաղադրիչ իրականացնելու հնարավորություն, որը կմեկնարկի ծրագրային հինգերորդ տարում և կշարունակվի մինչև 2020 թվականը: Այսինքն՝ ծրագրի իրականացման 5 տարի ժամանակահատվածը երկարաձգվել է ևս 1 տարով:

Վ. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ԱՄՆ ՄԶԳ-ին՝ համագործակցության և համընկերությանը ցուցաբերած վստահության համար:

ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի համակարգող Արթուր Դրամիյանն էլ շնորհավորեց ծրագրային հերթական տարվա ավարտի կապակցությամբ և հավելեց. «Շնորհիվ 4 տարիների ընթացքում կատարած լավ աշխատանքի, համընկերությանը տրվեց ևս մեկ հավելյալ բաղադրիչ իրականացման հնարավորություն: Բայց դա նաեւ շատ լուրջ պարտականություն ու պարտավորություն է, որովհետեւ ծրագրային լավ հիմքերով, կատարված լավ աշխատանքով փորձում ենք մտնել նոր ասպարեգ՝ փորձելով համահունչ գնալ երկրում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին»:

ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչը կոչ արեց ցուցաբերել ակտիվ մասնակցություն կառավարման համակարգում տեղի ունեցող իրադարձություններին, քանզի ներկա իրավիճակում տեղական իշխանությունները, կառավարության լիազոր մարմինն ավելի մեծ կարիք ունեն քաղաքացիական հասարակության կողմից առաջ քաշվող նախաձեռնությունների, բարեփոխումների իրականացման նոր ճանապարհների ուղենիշերի:

Երկօրյա հավաքի ընթացքում համընկերության բոլոր կազմակերպությունների կողմից ներկայացվեցին, քննարկ-

վեցին և ամփոփվեցին չորրորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքները, ի թիվս որոնց եղել են նաեւ չալանավորված բաղադրիչներ:

Անդրադառնալով կատարված աշխատանքներին՝ ՏՅԿԿ ղեկավար Գրիշա Խաչատրյանն ուրախությամբ արձանագրեց, որ ծրագրի շրջանակներում ներդրված մասնակցային էլեկտրոնային գործիքներն ավելի կիրառելի են դարձել: Որպես օրինակ նշեց այն հանգամանքը, որ պետական գերատեսչությունների կողմից եղել է առաջարկ՝ «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում» (ՀԿՏՀ) ավելացնել նոր գործիք՝ «Երկխոսություն անկյուն»:

Գ. Խաչատրյանը տեղեկացրեց, որ ծրագրային տարվա ընթացքում հանրայնացվել են համայնքային կայքերը, մշտապես գործել և հանրայնացվել է ծրագրի ֆեյսբուքյան էջը, celog.am պորտալը, որի դիտումների քանակը պարբերաբար ավելանում է: ՏՅԿԿ կողմից քայլեր են ձեռնարկվում բնակչության պետական ռեգիստրի հետ փոխգործունեության ապահովման ուղղությամբ, որպեսզի ավելի գործածական դառնան էլեկտրոնային ծառայությունները: Իրականացվել է նաեւ համայնքային կայքերի մշտադիտարկում, որը բավական մեծ արձագանք է ստացել:

Երկրորդ տեղի ունեցող ներքաղաքական փոփոխություններն Եականորեն ազդել են նաեւ ԵՄԱ կողմից իրականացվող բաղադրիչների վրա և ժամանակավորապես դադարեցվել է հեռուստատեսային հաղորդումների պատրաստումը: Ինչպես նշեց ԵՄԱ նախագահ Բորիս Նավասարդյանը, «այն խնդիրները, որոնք պետք է բարձրաձայնվեն պատրաստվող հաղորդումների ընթացքում, բավարար արձագանք չեն գտնի, որովհետեւ մարդիկ այլ բանի մասին էին մտածում, և ցանկացած իրականացված միջոցառում կարող էր կորչել այս ֆոնին»: Առաջարկվեց առայժմ առավել մեծ ուշադրություն դարձնել մարզային հաղորդումների պատրաստման վրա: Բորիս Նավասարդյանը հավելեց նաեւ, որ ծրագրով նախատեսված մամուլի ուսումնասիրությունները պարբերաբար արվում են, իսկ լրատվամիջոցների մրցանակների հանձնումը կիրականացվի հոկտեմբեր ամսին:

Ծրագրային տարվա համար նախանշված բաղադրիչներն ամբողջությամբ կատարել էր նաեւ ՀՌԿԿ-ն: Կազմակերպության ղեկավար Հեղինե Մա-

նասյանը նշեց, որ ավարտվում է դրամաշնորհային ծրագրերի իրականացումը, և ավարտական փուլում են նաեւ բազմաբնակավայր համայնքներում հետազոտությունների անցկացման համար հարցաթերթի նախապատրաստական աշխատանքները: ՀՌԿԿ ղեկավարը նկատեց, որ իրենց կազմակերպությունը եւս մասնակցել է տեղական ինքնակառավարման ինդեքսի մշակման գործընթացին, դասընթացներ է իրականացրել ԻնֆոՏեղի համար, անցկացրել է խորհրդատվական ծառայություններ մի քանի համայնքներում:

Ինչ վերաբերում է ԺԱԱ կողմից իրականացված ծրագրերին, ապա կազմակերպության նախագահ Լեւոն Բարսեղյանը հայտնեց, որ արդեն կանոնավոր գործում է www.publicdata.am կայքը, և շուտով կիրառվի նաեւ «Ապարեգ» հանդեսի հերթական համարը: Բաշխոսը հավելեց, որ մի քանի օրից հանրությանը կներկայացվի նաեւ ՏԻՄ-երի աշխատանքի մոնիտորինգի գեկույցը, որի նախնական տարբերակը, ինչպես միշտ, քննարկվել է մարզերում:

Տարվա ընթացքում իր ակտիվ գործունեությամբ աչքի է ընկել նաեւ ԵՀՀ-ն, որը մասնակցել է ծրագրի շրջանակներում անցկացվող միջոցառումների, հանդիպումների կազմակերպմանը, աջակցել գործընկեր կազմակերպությունների այս կամ այն բաղադրիչի իրականացմանը, կոորդինացրել հաղորդակցությունը այլ համընկերությունների հետ: Անդրադառնալով մի շարք աշխատանքների՝ ԵՀՀ ծրագրի համակարգող Միքայել Հովհաննիսյանը նշեց, որ կազմակերպությունը նախաձեռնել է բազմաթիվ ծրագրեր՝ համայնքների խոշորացման նախագծերի այլընտրանքային ճանապարհային քարտեզի մշակում, հետազոտությունների անցկացում, որոնց իրականացմանն ակտիվորեն նպաստել են ԻնֆոՏեղը: Ավանդույթի համաձայն, տարվա ընթացքում թողարկվել են նաեւ թեմատիկ մուլտիֆիլմերը, իրականացվել են «Մարդամեջ»-ի սոցիալական հավաքները:

Ինչպես նախորդ տարիներին, այս անգամ եւս առավել շատ բաղադրիչներ իրականացրել է ՀՖՍ-ն, որոնք ամփոփ ներկայացրեց «ՀամաՏեղ» ծրագրի սահմանում Մանե Աղամյանը: Ի դեպ, բաղադրիչները հիմնականում կրում են շարունակական բնույթ՝ համայնքների զարգացման ծրագրերի և բյուջեների նախագծերի հանրային քննարկումների կազմակերպում, փոքր դրամաշնորհներ-

րի տրամադրում, «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» հերթական տասներորդ հոբեյվանական գեկույցի թողարկում, «Համայնք-ՀամաՏեղ» պաշտոնաթերթի պատրաստում և հրատարակում, հանդիպում ուսանողների հետ: Ինչպես միշտ, այս տարի եւս ՀՖՍ փորձագիտական թիմը մասնակցել է մի շարք օրենքների նախագծերի մշակմանը, ներկայացրել առաջարկներ, որոնց մեծ մասը հավանության են արժանացել նախագծերի հեղինակների կողմից:

Ընդհանուր առմամբ արձանագրվեց, որ բոլոր կազմակերպություններն էլ արդյունավետորեն կատարել են իրենց ստանձնած պարտավորությունները, որոնք հիմնականում շարունակվելու են նաեւ ծրագրային հինգերորդ տարում:

Հանդիպման ընթացքում եղան մի շարք առաջարկներ, օրինակ, համընկերության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առավել շատ օգտագործել էլեկտրոնային գործիքակազմը: Մասնավորապես, Վ. Շահբազյանն առաջարկեց ծրագրի թիրախային համայնքներում շահագործվող Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում ստեղծել հնարավորություններ էլեկտրոնային հանրային քննարկումներ, բնակիչներին էլեկտրոնային հարցումներ և մասնակցային այլ մեխանիզմներ կազմակերպելու և իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՏԻ համակարգում շարունակում է արդիական մնալ վարչատարածքային բարեփոխումների գործընթացը, դրա շարունակականության հարցը, առաջարկվեց նոր ձեւաչափով համապարփակ ուսումնասիրություն իրականացնել բազմաբնակավայր համայնքներում, որի շրջանակներում օբյեկտիվ և խորքային մոտեցմամբ վեր կհանվեն մինչ այժմ իրականացված վարչատարածքային փոփոխությունների գործընթացի դրական և բացասական կողմերը, դրանց հիման վրա կարվեն համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ:

Երկօրյա քննարկումների առանցքային թեմաներից մեկն էլ վերաբերում էր հայաստանյան ներկա իրավիճակում համընկերության ունեցած դերին ու հետագա գործունեությանը: Այս համատեքստում շեշտադրվեց այն հանգամանքը, որ ի սկզբանե համընկերության վարած ռազմավարությունը եղել է շատ ճկուն, և ծրագրի ընթացքում իրականացված բոլոր գաղափարները, կատարված քայլերն այսօր էլ արդիական են, պահանջված, և պետք է հավատարիմ մնալ որդեգրած քաղաքականությանը:

Ամփոփելով երկօրյա հավաքը՝ ՀամաՏեղ ծրագրի համակարգող Միքայել Հովհաննիսյանը բարձր գնահատեց ծրագրային տարվա ընթացքում կատարված աշխատանքները և հավելեց, որ գալիք տարվա համար նախանշված ծրագրային բաղադրիչները լրամշակելուց հետո ներկայացվելու են ԱՄՆ ՄԶԳ՝ քննարկման և հաստատման համար:

Հանդիպման ավարտին Վ. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ծրագրի բոլոր աշխատակիցներին, ովքեր իրենց մասնագիտական ունակություններով ու հետեւողական աշխատանքով նպաստել են ՀամաՏեղ ծրագրի կայացմանն ու ճանաչելիությանը՝ առանձնակի կարեւորելով ԱՄՆ ՄԶԳ-ի դերը, որը միշտ աջակցել է համընկերությանը՝ ծրագրի նպատակների իրականացման գործում:

«Համայնք-ՀամաՏեղը»
 շարունակում է ներկայացնել ՀՀ
 համայնքներում ակտիվ
 գործունեություն ծավալող
 կազմակերպությունները:
 Առաջատարներից մեկն էլ
 Հայաստանի տարածքային
 զարգացման հիմնադրամն է:
 2016 թվականից սկսած՝
 Հիմնադրամը ներդրումային
 ծրագրեր է իրականացնում
 խոշորացված համայնքներում: Այդ
 ծրագրերը նպատակ են
 հետապնդում մեծացնել
 համայնքների ինքնուրույնությունը,
 բարելավել հանրային
 ծառայությունների մատուցման
 որակը, իհարկե, ավելացնել դրանց
 քանակը, տեղական
 իշխանություններին տրամադրել
 այնպիսի գործիքակազմ, որը
 հնարավորություն կտա սեփական
 միջոցներով լուծել պարբերաբար
 ծագող խնդիրները, այլ ոչ թե
 մշտապես մնալ խնդրողի կամ
 բողոքողի դերում: Այս գործընթացի
 մասին «Համայնք-ՀամաՏեղը»
 գրուցեց Հայաստանի տարածքային
 զարգացման հիմնադրամի ԱՄՆ
 ՄՀԳ ծրագրի համակարգող
 Դավիթ Ասլանյանի հետ:

- Պարոն Ասլանյան, արդեն մի քանի տարի է, ինչ Սոցնեդրոմների հիմնադրամը վերակազմավորվեց Տարածքային զարգացման հիմնադրամի: Այս փոփոխությունը ինչ-որ կերպ անդրադարձավ կառույցի գործունեության վրա:

- Իհարկե, փոխվեց նախեւառաջ փոփոխությունը՝ սոցիալական ներդրումներից, շենքերի եւ սոցիալական ենթակառուցվածքի պահպանման եւ վերականգնման խնդիրներից անցում կատարվեց համայնքների զարգացումը խթանելու խնդրին: Սկսեցին իրականացվել այնպիսի ծրագրեր, որոնք ներդրում են եւ՝ այսօրվա, եւ՝ վաղվա համար: Մեր համայնքները մի տեսակ պրոբլեմների կուտակման վայր էին դարձել: Կարծես թե բացի դժվարություններից, մեր մեծ ու փոքր գյուղերում, քաղաքներում չկային բնական, աշխարհագրական, կլիմայական, զբոսաշրջության առավելություններ, տաղանդավոր ու աշխատասեր մարդիկ, փայլուն երիտասարդներ, հիանալի գյուղատնտեսներ, անհավատալի հնարամիտ ինժեներներ ու մեխանիկներ ու լիքը այլ լուսավոր կետեր... Մեր խնդիրն էր նաեւ սեփական արժանիքների մասին համայնքի ներսում պատկերացումներ ձեւավորելը, ինչին չափազանց կասկածամիտ էին նայում հենց համայնքաբնակները: Երբ հայտարարվեց զարգացման ծրագրերի դրամաշնորհների մեկնարկի մասին, համայնքների ներկայացուցիչները կրկին վերհանեցին միայն խնդիրները՝ դպրոցի շենքը, մանկապարտեզի տանիքը, ակումբի դուռ-լուսամուտը եւ այլն: Դրանք բնավ անկարելի էին, բայց մենք փորձեցինք նրանց բացատրել, որ պետք է իրականացնել ոչ թե մեկանգամյա ծրագիր, այլ մի այնպիսի բան, որը հետագայում պարբերաբար ծագող խնդիրներ լուծելու եւ զարգանալու հնարավորություն կտա:

Առաջարկվեց խոշորացված համայնքների տեխնիկական վերազինման գաղափարը: Ի սկզբանե այս առաջարկն արվեց միայն Թումանյան, Տաթև եւ Դիլիջան խոշորացված համայնքներին: Սպասում էինք, որ մյուս համայնքները կներկայացնեն ավելի հետաքրքիր ծրագրեր, բայց բոլորը նախապատվությունը տվեցին տեխնիկական վերազինմանը: Սա, անշուշտ, արդարացված էր, որովհետեւ շուրջ 40 տարի այդ համայնքները ստիպված էին չէր մտնել, եւ դեռեւս օգտագործում են 70-ականների տրակտորներ, կոմբայն-

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆԱԿԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Համայնքների խոշորացումը պետք է տեղի ունենա նաեւ համայնքաբնակների գիտակցության մեջ



ներ, ավտոբուսներ կամ բեռնատարներ:

Այսպիսով ստեղծվեց մի միջանկյալ իրավիճակ, որը պարունակում էր եւ՝ հանապազօրյա խնդիրների լուծման, եւ՝ զարգացման, եւ՝ մրցակցային առավելությունների օգտագործման տարրեր:

Առաջ եկավ 2 հիմնական՝ հանրային ծառայությունների բարելավման ու ընդլայնման եւ համայնքի գյուղատնտեսությանն օժանդակելու ուղղություն: Առաջինը՝ ծախսատար, երկրորդը՝ եկամտաբեր, երկուսը միասին՝ միմյանց լրացնող, համայնքային բյուջեների համար անտանելի բեռ չառաջացնող, դեռ մի բան էլ՝ այդ բյուջեն ավելացնող բաղադրիչներ:

Այսօր արդեն կարող ենք արձանագրել, որ ԱՄՆ ՄՀԳ ֆինանսավորմամբ իրականացված այս ծրագրի արդյունքում 13 խոշորացված համայնքներում նկատելի են էական փոփոխություններ. փոխվել է մարդկանց կյանքի որակը, համայնքների ֆինանսական հոսքերի պատկերը, հանրային ծառայությունների որակն ու քանակը, մի քիչ էլ, ամենայն հավանականությամբ, համայնքաբնակների լավատեսությունն է ավելացել:

Ավելացնեմ, որ տեխնիկական վերազինումից գատ այլ աշխատանքներ եւս իրականացնում ենք. Դիլիջան հիմնադրամը մոդեռնիզացվում է արտաքին լուսավորության համակարգը, իսկ գյուղերում պետք է նոր համակարգ հիմնել, կառուցում ենք մեքենատրակտորային պարկեր ու կայանատեղեր: Դիլիջանում հիմնել ենք 4 ինժեներական լաբորատորիաներ, եւ երեխաներն իրենց գյուղերը չլքելով՝ ծրագրավորում, 3D նախագծում, ռոբոտաշինություն են ուսումնասիրում:

ԱՄՆ ՄՀԳ ֆինանսավորմամբ այս ծրագիրն իրականացվում է փուլ առ փուլ եւ շարունակվելու է մինչ 2020թ. օգոստոս ամիսը:

- Համայնքներում Ձեր կատարած աշխատանքների ընթացքում ինչպիսի՞ խնդիրների եք առավել հաճախ բախվում:

- Առաջինն այն է, ինչի մասին արդեն կշեցի. դժվար էր համայնքին ստիպել հանդես գալ իր առավելությունների դիրքերից:

Պետք է հաղթահարել աղքատի հոգեբանությունը, գիտակցել, գնահատել իսկական համայնքային կարիքները եւ մրցակցային առավելությունները, համադրել դրանք եւ տեսնել, թե որտեղից ինչ կարելի է աշխատել եւ ինչի համար ծախսել:

Պատկերացրեք, մի շատ աղքատիկ տուն. կտուրը կաթում է, հատակը փտած է, պատերն անմխիթար են, ջրի խողովակներն իսպառ ծանոթված... Եւ ուսանողները մեր պես մեկը մտնում է ու տան անդամներին հարցնում՝ ի՞նչ կարելի է անել 1000 դոլարով: Բոլորը սկսում են մատնացույց անել կտուրը, ծորակը, պատի ճեղքերը, ծակ հատակը ու մի տասնյակ էլ ուրիշ պրոբլեմ, բայց տան անդամներից ոչ մեկի մտքով անգամ չի անցնում, որ իրենց հայրը հիանալի կոչկակար է ու կարելի էր 1000 դոլարով 1000 ծակ կարկատելու անիմաստ զբաղմունքը փոխարինել մի համեստ կոչկակարի արհեստանոց բացելով եւ տան խնդիրները դրա բերած եկամուտներով աստիճանաբար լուծելով: Սա՝ պատկերավոր. չէ՞ որ համայնքը մի մեծ ընտանիք է, իսկ զարգացման ծրագիրը՝ դրսից տուն մտած փող:

Կա ավելի մեծ խնդիր, որը հանդիպում ենք խոշորացված համայնքներում. համայնքները միավորվել, խոշորացել են, բայց համայնքաբնակները չեն միավորվել, իրենց գիտակցության մեջ մնացել են ֆրագմենտալ: Ինչպես ամեն թաղամասն էր իրեն գյուղից առանձնացնում, հիմա էլ ամեն բնակավայր առանձնացնում է իրեն այդ համայնքից: Չկա այն բանի գիտակցումը, որ 15 բնակավայր ունեցող համայնքի

համար ծրագրով հատկացված էքսկլուզիվա պետք է առաջնահերթ փողի այսինչ գյուղի դպրոցի ջրագիծը, որովհետեւ երեխաները ջուր չունեն, հետո նոր՝ երրորդ բնակավայրի ճանապարհի մասնակիորեն քանդված հատվածը:

Բնակիչներն իրենց չեն նույնացնում այդ համայնքի հետ: Ցանկալի է, որ մարդիկ միմյանց նկատմամբ բարոյացան ու կամեցող լինեն, քանի որ համայնքային առօրյան առավել, քան մեծ քաղաքներինը, կախված է մարդկային ջերմ հարաբերություններից: Եթե համայնքների խոշորացում է տեղի ունեցել, ապա այդ խոշորացումը պետք է տեղի ունենա մարդկանց գիտակցության մեջ նույնպես: Իսկ եթե երկրում հեղափոխություն է տեղի ունեցել, ապա այդ հեղափոխությունը պիտի հասնի մեր ամենահեռավոր գյուղերը՝ անհատապաշտությունը, նախանձը, այսօրվա բաժինը փախցնելու մոլուցքը փոխարինելով միասնականության, փոխօգնության, կողքինի հաջողությամբ ուրախանալու կարողությամբ:

Ընդհանուր առմամբ, իրավիճակային խնդիրների հանդիպում ենք պարբերաբար, բայց լավն այն է, որ մենք կամաց կամաց սկսել ենք շարժվել այն տարբերակով, որ փակ դուռը շարժելու փոխարեն «բանալի» ենք գտնում: Օրինակ, այս ծրագրի իմ ամենամեծ հպարտությունն այն է, որ մի քանի համայնքներում պետք է արեւային կայաններ տեղադրենք. դա նման է նրան, որ ուղղակի հողին ընկնող, կորչող փողը հավաքում դնում են գրպանը:

- Ի հավելումն ասվածի...
 - Ի հավելումն... պարզապես մի լավ առակ:

Հորդառատ անձրեւոտ մի օր, մարդկային կերպար առած երկու հրեշտակ գնում են ճանապարհով ու տեսնում են, որ եզը ընկել է ջրափոսը, ու եզատերն ամեն ճիգ գործադրում է, որ կենդանուն հանի այնտեղից: Հրեշտակներից մեկը ձեռքի թեթեւ հպումով օգնում է եւ եզանը հանում են փոսից:

- Բայց մենք իրավունք ունե՞ինք խառնվելու,- հարցնում է կրտսեր հրեշտակը:

- Իհարկե, մարդն առանց հուսահատվելու ամեն ջանք գործադրում էր, ինչպես կարող էինք չօգնել,- պատասխանում է ավագ հրեշտակը:

Նրանք շարունակում են ճանապարհը ու կրկին տեսնում են, որ մեկ ուրիշի անատունն է ընկել ջրափոսը, իսկ տերը հուսահատ լաց է լինում: Հրեշտակն անտարբեր անցնում է:

- Սրան ինչո՞ւ չօգնեցիր,- հարցնում է կրտսեր հրեշտակը:

- Օգնեի, որ լա՞ց լինեի,- խորիմաստ պատասխանում է ավագ հրեշտակը:

Համայնքային զարգացման ծրագրերը պիտի ուղղվեն բացառապես այն գյուղերն ու քաղաքները, որոնցում ջանք ու ճիգ չի խնայվում՝ ինչ-որ նպատակների հասնելու համար:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ ԿՆՊԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ՉԱՐԳԱՑՄԱՆԸ

2015 թվականին, երբ ՀՀ ՏԻ համակարգում մեկնարկեցին վարչատարածքային բարեփոխումները, ակնկալվում էր, որ այս գործընթացին զուգահեռ կամ դրանից հետո իրականացվելու է լիազորությունների ապակենտրոնացումը: Վերջին քաղաքական փոփոխությունների բերումով այսօր ժամանակավորապես սամեցված են ՀՀ վարչատարածքային բարեփոխումները եւ, բնականաբար, նույնը վերաբերում է նաեւ լիազորությունների ապակենտրոնացմանը:



Գործընթացի կարեւորության եւ հրատապության մասին բարձրաձայնում են միայն տեղական, հասարակական եւ ՀՀ-ում գործունեություն իրականացնող միջազգային կառույցները:

Օրերս Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) գրասենյակում հյուրընկալվել էին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) «Հարավային Կովկասում լավ տեղական ինքնակառավարում» ծրագրի հրավերով Հայաստանում գտնվող ապակենտրոնացման հարցերով միջազգային փորձագետ Շտեֆան Դրագերը, ինչպես նաեւ ապակենտրոնացման

հարցերով փորձագետ Զարո Ըլբրիխտը:

ԳՄՀԸ «Հարավային Կովկասում լավ տեղական ինքնակառավարում» ծրագրի խորհրդատու Գարիկ Խաչիկյանը տեղեկացրեց, որ Գերմանիայից փորձագետներ հրավիրելու նպատակը հետեւյալն է՝ լիազորությունների ապակենտրոնացման հետ կապված ներկա իրավիճակի վերլուծություն եւ գնահատում, ինչպես նաեւ որոշակի առաջարկությունների ձեւակերպում:

Ողջունելով հյուրերին՝ ՀՖՄ նախագահ Վահան Մովսիսյանը տեղեկացրեց, որ լիազորու-

թյունների ապակենտրոնացումը տարիներ շարունակ եղել է մտում է իրենց կազմակերպության ուշադրության կենտրոնում, իսկ կազմակերպության փորձագետները կատարել են մի քանի ուսումնասիրություններ, որոնք արժանացել են պետական կառավարման մարմինների եւ մասնագետների ուշադրությանն ու հավանությանը:

«Տեղական իշխանությունները պետք է պատրաստ լինեն լիազորությունների ապակենտրոնացմանը, հակառակ դեպքում դա կմնակվի ընտանիքում անփորձ երեխայի վրա մեծ

պարտավորություններ դնելուն: Դա չի կարելի անել, որովհետեւ երեխան, անկասկած, կտապալի այդ գործը:

Մենք ուզում ենք ունենալ տեղական ինքնակառավարման այնպիսի համակարգ, որը օժտված կլինի ավելի լուրջ լիազորություններով, քան այսօր է: Սրան մշտապես խանգարել է փոքր բնակչությամբ ու սակավ ռեսուրսներով բազմաթիվ համայնքների առկայությունը: Սա էր համայնքների խոշորացման գործընթացի նախաձեռնման գլխավոր պատճառը»,- նշեց ՀՖՄ ղեկավարը: Վերջինս հավելեց նաեւ, որ համայնքների անհամաչափ խոշորացումը լուրջ դժվարություններ է ստեղծել լիազորությունների սիմետրիկ ապակենտրոնացման համար:

Հաջորդ խնդիրն, ըստ բանախոսի, որը խանգարում է լիազորությունների ապակենտրոնացման իրականացմանը, գործընթացի վերաբերյալ իշխանությունների ունեցած ոչ ամբողջական պատկերացումներն են, քանզի նրանք ապակենտրոնացումը հիմնականում դիտարկում են որպես լիազորությունների պատվիրակում, մինչդեռ իրական ապակենտրոնացումը պետական լիազորությունների

փոխանցումն է համայնքներ՝ որպես ՏԻՄ-երի սեփական լիազորություններ:

Վ. Մովսիսյանը ներկայացրեց նաեւ այն ոլորտները, որտեղից առաջնահերթ պետք է սկսել լիազորությունների ապակենտրոնացումը:

Միջազգային փորձագետ Շտեֆան Դրագերը նույնպես այն համոզմանն էր, որ ապակենտրոնացումը չի կարող դիտարկվել միայն լիազորությունների պատվիրակման ձեւով, բայց նաեւ անդրադարձավ այն ռիսկերին, որոնք կարող են առաջանալ լիազորությունները համայնքներին փոխանցելու դեպքում: Միջազգային փորձագետը մասնավորապես շեշտադրեց այն հանգամանքը, որ համայնքների ունեցած կարողությունները սկզբնական շրջանում չեն բավարարում փոխանցված լիազորությունները բարձր մակարդակով եւ որակյալ իրականացնելու համար:

Ի պատասխան հնչեցված մտահոգության՝ Վ. Մովսիսյանը նկատեց, որ գործընթացը պետք է պլանավորել եւ իրականացնել դանդաղ, աստիճանաբար:

Բավական բովանդակալից ու բազմակարծիք հանդիպման ընդհանուր եզրահանգումն այն էր, որ լիազորությունների եւ ֆինանսական ապակենտրոնացումը բարեփոխումների անհրաժեշտ եւ անխուսափելի ուղղություններից մեկն է, որի կյանքի կոչումը կնպաստի ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի կայացմանն ու զարգացմանը:

Հ. ԲԵՐՈՒՅԱՆ

Համայնքի ռազմավարական պլանավորման (ՀՌՊ) ոլորտում Հայաստանում առայժմ որեւէ մեթոդաբանություն չի մշակվել եւ ներդրվել: Սակայն, նման մեթոդաբանության կարիքը միշտ էլ ՀՀ համայնքներում զգացվել է, եւ դրա մշակման անհրաժեշտությունը ներկայումս էլ համարվում է ՀՀ ՏԻ համակարգի արդիական խնդիրներից մեկը:

Այս բնագավառում Հայաստանն իր առաջին քայլերն է անում: Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության զարգացմանը» ծրագրի (ԵԽ Ծրագրի) շրջանակներում ՀՀ 52 բազմաբնակավայր համայնքների ներկայացուցիչների համար «Համայնքի ռազմավարական պլանավորում» դասընթացի կազմակերպումը, անցկացումը եւ ներդրման սկզբնական աշխատանքների իրականացումը լավ առիթ ու հնարավորություն էր մեր երկրի բազմաբնակավայր համայնքներում ռազմավարական պլանավորման աշխատանքների մեկնարկը տալու համար:

Դասընթացների կազմակերպման եւ անցկացման կազմակերպչական բոլոր աշխատանքներն իրականացվեցին ԵԽ Ծրագրի անձնակազմի կողմից, իսկ փորձագիտական աշխատանքները՝ Ծրագրի միջազգային խորհրդատու Լոռենցո Ալիոյի եւ տեղական խորհրդատու Վահրամ Շահբազյանի կողմից՝ Ծրագրի ղեկավար Լիանա Աղաբեկյանի համակարգմամբ:

«ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

խորհրդի «ՀՌՊ» գործիքակազմի վրա՝ Ծրագրի խորհրդատուների կողմից մշակվեցին ՀՌՊ ուսուցման մոդուլները՝ դասախոսությունների եւ գործնական աշխատանքների տեսքով, որոնք էլ տրամադրվեցին դասընթացների մասնակիցներին:

2018թ. հունիսի 10-13-ը Շաղկաձորում կազմակերպվեց եւ անցկացվեց 2 դասընթաց՝ յուրաքանչյուր խմբում ընդգրկելով 26 բազմաբնակավայր համայնքներից 1-ական ներկայացուցիչների, ինչպես նաեւ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության եւ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀՀ-ի ներկայացուցիչների: Դասընթացներին մասնակցեցին ընդհանուր թվով 48 ունկնդիրներ:

Դասընթացների բացմանը մասնակցեց նաեւ ՀՀ ՏԿԶ փոխնախարար Դավիթ Գեյորգյանը, որը ներկայացրեց համայնքների առջեւ ծառայած նոր մարտահրավերները եւ խնդիրները: Մասնակիցները փոխնախարարին ուղղեցին բազմաթիվ հարցեր, որոնք առնչվում էին համայնքներում առկա բազմաբնույթ խնդիրներին, ՏԻ բնագավառի բարեփոխումների շարունակմանը, կա-



ռավարման ապակենտրոնացմանը, ՏԻՄ-երի լիազորությունների եւ ֆինանսների համապատասխանությանը, համայնքների ֆինանսավորման նոր աղբյուրներին եւ այլն: Պարոն Դ. Գեյորգյանը՝ պատասխանելով բոլոր հարցերին, նաեւ նշեց, որ ՏԻՄ-երը, նախ պետք է լիարժեքորեն եւ արդյունավետորեն իրականացնեն ներկայումս օրենքով իրենց վերապահված բոլոր լիազորությունները, հետո միայն քննարկման առարկա դառնան վարչական եւ ֆինանսական ապակենտրոնացման նոր հարցերը: Նա անհրաժեշտ համարեց հստակեցնել ՏԻ համա-

կարգի բարեփոխումների ուղղությունները եւ ժամկետները, ըստ այդմ էլ մշակել պետական քաղաքականությունը ՏԻ բնագավառում:

Ընդհանուր առմամբ, անցկացված 2 դասընթացներն էլ անցան բավականին հետաքրքիր ու լավ մթնոլորտում, ուսուցանողները եւ մասնակիցները համատեղ շանքերով ապահովեցին դասընթացի պատշաճ մակարդակ՝ դրսեւորելով բարձր ակտիվություն, շահագրգռվածություն եւ պատասխանատվության մեծ զգացում: Արդյունքում դասընթացների մասնակիցները գոհ ու բավարարված մնացին՝

ստանալով նոր գիտելիքներ ու հմտություններ ՀՌՊ-ի բնագավառում:

Դասընթացների ավարտից հետո, որպես ՀՀ 52 բազմաբնակավայր համայնքներում ՀՌՊ-ի ներդրման մեկնարկային եւ կարեւոր բաղադրիչ, տեղական խորհրդատուի կողմից համայնքների աշխատակազմերում տարվեցին խորհրդատվական եւ ուղղորդիչ աշխատանքներ՝ մշակելու եւ քննարկելու համայնքների առաջիկա 10 տարիների տեսլականները եւ ռազմավարական նպատակները: Այդ աշխատանքները համայնքների համապատասխան մասնագետները կատարեցին պատվով ու բարձր պատասխանատվությամբ: Արդյունքում, հստակ ձեւակերպումներ տրվեցին բոլոր բազմաբնակավայր համայնքների գալիք 10 տարիների տեսլականներին եւ ռազմավարական նպատակներին՝ դրանք դիտարկելով որպես կարեւոր ուղեւիշներ համայնքների միջնաժամկետ եւ կարճաժամկետ զարգացման ծրագրերը մշակելու եւ իրականացնելու համար:

ՎԱՅՐԱՍ ՇԱԲԱԶՅԱՆ
Եւ Ծրագրի տեղական
փորձագետ

«ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆԸ». ԵԶՐԱՓԱԿԻՉ ՅԱՄԱԺՈՂՈՎ

կառավարման մարմինների ներկայացուցիչները, քաղաքացիների մասնակցությամբ զբաղվող ԶԿ-ները, Տեղական ժողովրդավարության եվրոպական ասոցիացիան (ALDA):

Սեփ. լր.

Սեպտեմբերի 6-ին ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանն ու նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը մասնակցել են Երեւանում անցկացվող «Ազակցությունը Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի եզրափակիչ համաժողովին:

Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ. ծրագրի շրջանակներում ընդգրկված այս կարճ ծրագիրը ուղղված է աջակցելու ՀՀ իշխանություններին՝ վարչատարածքային եւ հետագա ապակենտրոնացման բարեփոխումների հարցում, միեւնույն ժամանակ՝ զարգացնելով 52 միավորված համայնքների կարողությունները՝ ապակենտրոնացման մարտահրավերներին ավելի լավ պատրաստ լինելու նպատակով:

Համաժողովի նպատակն էր ներկայացնել ձեռք բերված հիմնական արդյունքները, ինչպես նաեւ ստեղծել հարթակ շահագրգիռ կողմերի համար՝ տեսակետներ փոխանակելու եւ քննարկելու նպատակով:

mtad.am



Եւ գործիքակազմի կիրառումը համայնքներում

Եվրոպայի Խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ. ծրագրի համատեքստում կազմակերպված «Ազակցությունը Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագիրը նպատակ ունի ամրապնդել տեղական ժողովրդավարությունը եւ աջակցել ապակենտրոնացմանը Հայաստանում: Ծրագրով աջակցություն է տրամադրվում ՀՀ կառավարությանը՝ բարելավելու տեղական ինքնակառավարման իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակները եվրոպական ստանդարտներին եւ գործիքներին համապատասխան: Հայաստանի համայնքները իրենց հերթին կօգտվեն այն կարողությունների զարգացման ամուսնով, որոնք նպատակաուղղված կլինեն նրանց միջին փոխգործակցությունն ամրապնդելուն եւ քաղաքացիներին ավելի արդյունավետ ծառայություններ մատուցելուն:

Ծրագրի շրջանակներում խնդիր է դրված նպաստել ՀՀ-ում

թյունը եւ այլն: Եւ գործիքակազմի կիրառումը համայնքներին հնարավորություն է ընձեռում առավել կառուցողական մոտեցում ցուցաբերել որոշումների կայացման գործընթացում բնակիչների մասնակցությունը ապահովելիս, միեւնույն ժամանակ, կատարելով շահակիրների գնահատում կոնկրետ խնդրի շուրջ, ՏԻՄ-երը կարող են արժեքավոր առաջարկություններ ստանալ մասնակցների առավել կոմպետենտ շրջանակներից:



վարչատարածքային բարեփոխումների արդյունքում նոր ձեւավորված 52 բազմաբնակավայր համայնքներում նպաստել եվրոպայի Խորհրդի կողմից մշակված C.L.E.A.R. գործիքակազմի (այսուհետ՝ Գործիքակազմ) կիրառմանը, աջակցել համայնքային իշխանություններին խորությամբ հասկանալ Գործիքակազմի անկյունաքարային դրույթները, մոտեցումները, ինչը թույլ կտար նորովի բացահայտել համայնքում քաղաքացիական մասնակցության ներուժը, գնահատել պոտենցիալ շահակիրների ցանկը, նրանց կարողություններն ու համագործակցելու պատրաստակամու-

վերոնշյալը իրականացնելու նպատակով 2018թ. մարտի 20-23-ին նոր ձեւավորված 52 համայնքները բաժանվեցին 2 խմբի, եւ յուրաքանչյուր խմբի համար կազմակերպվեցին երկօրյա սեմինարներ միջազգային եւ տեղական փորձագետների մասնակցությամբ: Սեմինարների ընթացքում համայնքների ներկայացուցիչներին հանգամանորեն ներկայացվեց Գործիքակազմի էությունը, դրա տրամաբանությունը եւ կիրառման ձեւը: Պայմանականորեն ձեւավորված փոքր խմբերի շրջանակներում կատարվեց Գործիքակազմի փորձնական կիրառում՝ սեփական նախաձեռնությամբ ընտր-



← Էջ 1

ՏԻՄ-ԵՐ ՅԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՅՆԱՐԱՎՈՐ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ

Միջոցառումը բաղկացած էր երեք մասից՝ հետազոտության արդյունքների, ոլորտը կարգավորող օրենսդրական կարգավորումների ներկայացում եւ հնարավոր հետագա անելիքների քննարկում:

Միջոցառումն ի հայտ բերեց մի շարք կարեւոր առանձնահատկություններ: Նախ՝ արձանագրվեց, որ ՏԻՄ-ԵՐ համագործակցությունը տալիս է համայնքի մարդկային, ֆինանսական եւ այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործման լրացուցիչ հնարավորություններ, որոնք անհրաժեշտ է ճիշտ գնահատել եւ հաշվի առնել: Զանի որ ՏԻ-ն իրենից ենթադրում է անկախություն կենտրոնական իշխանությունից, անհրաժեշտ է հասկանալ, որ բնակիչների, ՀԿ-ների մասնակցությունը համայնքի կառավարմանը ոչ միայն հնարավոր է, այլ նաեւ անհրաժեշտ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան բազմաթիվ գործիքներ եւ հնարավորություններ այդ համագործակցությունն առավել ակտիվ դարձնելու համար: Դրանք են, մասնավորապես, ծառայությունների, օրինակ, հանրային քննարկումների եւ լուսմների կազմակերպման պատվիրակումը ֆասիլիտացիոն փորձ ունեցող ՀԿ-ներին, համայնքի բնակիչների

կարծիքի հարցման պատվիրումը, դրամաշնորհային ծրագրերի միջոցով հավելյալ գործողությունների իրականացումը, ՏԻՄ աշխատակիցների կարողությունների զարգացումը կրթական ոլորտում աշխատող ՀԿ-ների կողմից եւ այլն: ՀՀՄ ուսումնասիրությունը փաստում է, որ ՏԻՄ-ԵՐ համագործակցության համար որոշ դեպքերում պարզապես չկան օրենսդրական կարգավորումներ, իսկ որոշ դեպքերում էլ գոյություն ունեցող կարգավորումները խոչընդոտում են այդ գործիքների իրականացմանը: Մասնավորապես, երբ խոսքը գնաց ՏԻՄ-երում կամավոր-փորձնականների ինստիտուտի ներդրման մասին, ՀՀՄ փորձագետ Դավիթ Մարգարյանը նշեց, որ Հայաստանում այդ ոլորտը դեռեւս չի կարգավորվում, եւ փորձնակների կատարած աշխատանքը

չի կարող հաշվարկվել որպես աշխատանքային ստաժ: Իրենց դրական փորձի մասին պատմեց Ախուրյան համայնքի ղեկավար Արծրուն Իգիթյանը, նշելով, որ իրենց մոտ գրեթե չկան ՀԿ-ներ, սակայն համայնքապետարանը աջակցում է եւ խրախուսում բնակիչների մասնակցությունը: ՏԻՄ կողմից ընդունվում են առաջարկություններ եւ հնարավորության դեպքում՝ իրագործվում: Համագործակցության օրինակ է դպրոցականների դիմումը համայնքապետարան՝ դպրոցի ցանկապատը ներկելու համար: Ի պատասխան, համայնքապետարանը տրամադրել է անհրաժեշտ ներկերը՝ մասնակցելով ներկման աշխատանքներին: Ուշագրավ է, որ որոշ դեպքերում այս կամ այն մեխանիզմի կիրառման համար որեւէ խոչընդոտ չկա, սակայն ՏԻՄ-երն ու

ՀԿ-ները պարզապես չգիտեն նման մեխանիզմի գոյության կամ հնարավորության մասին: Ինչը նշանակում է, որ բացի օրենսդրական դաշտից, անհրաժեշտ է գործողություններ իրականացնել նաեւ ինստիտուցիոնալ եւ կիրառական հարթություններում: Մասնավորապես՝ նախաձեռնել եւ իրականացնել ծագրեր եւ գործողություններ առանձին վերցրած համայնքներում՝ ելնելով վերջիններիս կարիքներից եւ հաջողության դեպքում, տարածել այդ դեպքերի մասին տեղեկատվությունը հնարավորինս լայն շրջանակներում: Զննարկման արդյունքում ձեռք բերվեցին որոշակի պայմանավորվածություններ թե՛ օրենսդրական, թե՛ ինստիտուցիոնալ եւ թե՛ կիրառական դաշտերում իրականացվելիք գործողությունների մասին:

Սեփ. լր.


ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՁԱՅՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Որպեսզի բնակիչների ձայնը լսելի լինի

← էջ 1

ՀՖՄ Նախագահ Վահան Մովսիսյանը մանրամասնեց. «Եթե խոշորացումը դիտարկում ենք որպես արդյունավետ կառավարման գործիք, ապա խոշորացված համայնքներում շփումը բնակչության հետ ավելի դժվար է իրականացվում, քան միաբնակավայր համայնքներում: Հետևաբար մենք պետք է շատ մեծ ուշադրություն դարձնենք դրա վրա, որպեսզի կարողանանք ապահովել բնակիչների ձայնը լսելի դարձնելու գործընթացը»:

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի տեղակալ Դավիթ Գեւորգյանը նույնպես կարեւորեց ծրագրի իրականացումը. «Հայաստանում հյուսիսից հարավ, արեւելքից արեւմուտք չի կարող լինել մի համայնք, որտեղ քաղաքացու ձայնը լսելի չի կարող լինել մի համայնքի ղեկավար, որից դժգոհ լինի բնակչության զգալի հատվածը: Այս տեսանկյունից նման ծրագրերը շատ կարեւոր են, որովհետեւ լավ գիտենք՝ ինչ իրավիճակ ենք ունեցել նախկինում եւ ունենք հիմա, լավ գիտենք, որ երկրում մթնոլորտ է փոխվել: Բոլորս պետք է հետեւություններ անենք ու շարժվենք համապատասխան Հայաստանի նոր իրավիճակի, իրողությունների: Ուզում եմ կարեւորել այն հանգամանքը, որ քաղաքացիները ու հատկապես ակտիվ երիտասարդությունը պետք է մասնակից ու հաղորդակից լինեն ծրագրերին եւ համայնքներում կատարվող ամեն ինչին, նաեւ կառավարմանը: Առաջիկա այս մասով շատ լուրջ փոփոխություն չունենք, եւ ուզում եմ, որ հետագա գործողություններում սա հաշվի առնենք»:



մայնքներում կատարվող ամեն ինչին, նաեւ կառավարմանը: Առաջիկա այս մասով շատ լուրջ փոփոխություն չունենք, եւ ուզում եմ, որ հետագա գործողություններում սա հաշվի առնենք»:

Դ. Գեւորգյանը հույս հայտնեց, որ այս եւ նմանօրինակ ծրագրերն օգտակար կլինեն համայնքների համար, ոչ թե ձեռք, այլ բովանդակություն կունենան, եւ համայնք մտնելիս արդեն տեսանելի կլինի, թե ինչ փոխվեց այս ծրագրի արդյունքում:

ՀՖՄ ղեկավարը վստահեցրեց, որ ծրագիրն իրականացվելու է՝ հաշվի առնելով Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության կողմից սահմանված առաջնահերթությունները:

Ինչ վերաբերում է ծրագրի նպատակներին, ապա Վահան Մովսիսյանը նշեց. «Բազմաբնակավայր համայնքներում մասնակցությունն ապահովելու համար փորձելու ենք լսելի դարձնել բնակչության ձայնը: Ի տարբերություն մյուս ծրագրերի, այս մեկն ունի առավելություն, որ մեզ հետ աշխատելու է մեկ տեղական եւ մեկ միջազգային կազմակերպություն, որոնք համայնքների հետ աշխատելու բավական մեծ փորձ ունեն: Մյուս առավելությունն այն է, որ ծրագիրը դատարկածեռն չենք իրականացնելու, եւ լինելու են ներդրումներ, որոնք կազմում են ծրագրի ընդհանուր արժեքի 40 տոկոսը: Բոլոր 52 խոշորացված համայնքներում ունենալու ենք բնակիչների հետ աշխատանք, բնակիչ-համայնք կապի ուժեղացում եւ համայնքի բյուջեում «բնակչի բյուջե» տողի ստեղծում, որտեղ գումար ենք դնելու մենք եւ համայնքը, եւ այդ գումարն օգտագործվելու է այն ուղղությամբ, որը բնակիչները

նախադրյալներն ապահովելու համար փորձելու ենք լսելի դարձնել բնակչության ձայնը: Ի տարբերություն մյուս ծրագրերի, այս մեկն ունի առավելություն, որ մեզ հետ աշխատելու է մեկ տեղական եւ մեկ միջազգային կազմակերպություն, որոնք համայնքների հետ աշխատելու բավական մեծ փորձ ունեն: Մյուս առավելությունն այն է, որ ծրագիրը դատարկածեռն չենք իրականացնելու, եւ լինելու են ներդրումներ, որոնք կազմում են ծրագրի ընդհանուր արժեքի 40 տոկոսը: Բոլոր 52 խոշորացված համայնքներում ունենալու ենք բնակիչների հետ աշխատանք, բնակիչ-համայնք կապի ուժեղացում եւ համայնքի բյուջեում «բնակչի բյուջե» տողի ստեղծում, որտեղ գումար ենք դնելու մենք եւ համայնքը, եւ այդ գումարն օգտագործվելու է այն ուղղությամբ, որը բնակիչները

կցանկանան: Փորձելու ենք խրախուսել նաեւ միջհամայնքային համագործակցությունը»:

Բանախոսը տեղեկացրեց, որ ծրագրով նախատեսվում են նաեւ ցուցադրական դրամաշնորհներ՝ նպատակ ունենալով ցույց տալ, թե փոքր գումարով ինչպիսի ստարտափ կարելի է իրականացնել, որին հետո կարող է միանալ համայնքը, պետությունը: Ծրագրի այս բաղադրիչն իրականացվելու է Ծիրակ, Լոռի, Տավուշ մարզերի խոշորացված համայնքներում:

«Քաղաքացիների ձայնը եւ գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի մասին առավել մանրա-

որացված համայնքներում համագործակցության հզորացումը, ինչպես նաեւ համագործակցություն ԵՄ երկրների համայնքների հետ: Ծեշտադրվելու է համագործակցությունը համայնքային, միջհամայնքային եւ մարզային մակարդակներում: Առաջին գործողությունն աշխատանքային խմբերի ձեւավորումն է, որոնց մեջ հիմնականում ընդգրկվելու են կանայք եւ երիտասարդներ, որոնք կարողությունների զարգացման համար անցկացվելու են ուսուցողական սեմինարներ եւ փորձելու են ներկայացնել, թե տարբեր խնդիրների նկատմամբ ինչպիսի մոտեցումներ կարելի է ցուցաբերել:

Ա. Արտաշեսյանը ներկայացրեց նաեւ, թե ինչ է իրենից ներկայացնում քաղաքացիների բյուջեն:

Ծրագրի ներկայացումից հետո տեղի ունեցավ համագործակցության հուշագրերի ստորագրում համայնքների եւ «Քաղաքացիների ձայնն ու գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում»



մասնորեն խոսեց ծրագրի ղեկավար, Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահի տեղակալ Արտաշեսյանը: Վերջինս, որպես ծրագրի իրականացման հիմնական խնդիր առանձնացրեց խոշորացված համայնքներում

ծրագրի միջեւ: Առաջիկայում սմանօրինակ հանդիպումներ նախատեսվում են ծրագրի շահառու մյուս համայնքների հետ եւս:

Հ. ԶԵՐՈՒՅԱՆ

Սեպտեմբերի 26-ին Գեւորգյանից մարզի Մարտունի համայնքում մեկնարկեց 2017թ. Մարդամեջ սոցիալ նորարարական հավաքի ընթացքում ստեղծված եւ մշակված ՏԻՄպուլս մասնակցային խաղը, որի նպատակն է համայնքի երիտասարդ բնակիչների մասնակցության միջոցով բարձրացնել ավագանու անդամների աշխատանքի որակն ու արդյունավետությունը: Ըստ խաղի կանոնների՝ մասնակիցները բաժանվում են թիմերի, որոնցից յուրաքանչյուրը ողջ խաղի ընթացքում աշխատում է ավագանու մեկ անդամի հետ՝ փորձելով նրա միջոցով վերհանել համայնքի հրատապ խնդիրներն ու նպաստել դրանց լուծմանը:

ՏԻՄpulse-ի ՄԵԿՆԱԿՐԿԸ ՏՐՎԱԾ Է



Դեռեւս 2017թ. ձեւավորված ՏԻՄպուլս խաղի ադմինիստրատիվ թիմը, Մարտունու ԻնֆոՏան համակարգողների օգնությամբ ներկայացրեց խաղը համայնքի հիմնական եւ ավագ դպրոցներում՝ իրավիճակով բարձր դասարանցիներին մասնակցելի խաղին: Արդյունքում հավաքագրվեցին 14-16 տարեկան 26 մասնակիցներ, որոնց հետ հանդիպումը տեղի ունեցավ սեպտեմբերի 26-ին, Մարտունու Ինֆոտանը: Հանդիպման նպատակն էր երիտասարդներին տեղեկություններ հաղորդել ՏԻՄ

կառուցվածքի, համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների լիազորությունների, բնակիչների մասնակցային մեխանիզմների վերաբերյալ, ինչպես նաեւ ծանոթացնել խաղի հիմնական կանոններին եւ տալ առաջին հանձնարարությունը: Միջոցառման առաջին հատվածում Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) ներկայացուցիչ Դավիթ Մարգարյանը մասնակիցներին պատմեց, թե ինչ է ՏԻՄ-ը, որոնք են համայնքի ավագանու անդամների գործառնությունները, ինչպես է տեղի ունենում համայնքային խնդիրների առաջնահերթությունների սահմանումը եւ ինչպես են համայնքում որոշումներ կայացվում: Այնուհետեւ Եվրոպայի համագործակցություն (ԵՀՀ) հիմնադրամի Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը (ՀամաՏեղ) ծրագրի ղեկավար Միքայել Հովհաննիսյանը մասնակիցներին բացատրեց խաղի կանոնները եւ ընթացքի վերաբերյալ կարեւոր մանրամասները:

Քանի որ Մարտունի համայնքում ավագանու անդամները թվով 12-ն են, ձեւավորվեց 12 խումբ: Մասնակիցները ստացան իրենց առաջին հանձնարարությունը. յուրաքանչյուր թիմ մեկ շաբաթվա ընթացքում պետք է հարցազրույց անցկացնի իր գործընկեր ավագանու անդամի հետ, դրա հիման վրա կազմի նրա կենսագրությունը, որն այնուհետեւ կտեղադրվի համայնքի կայքում, ինչպես նաեւ խաղի timpulse.am կայքում: Այսպիսով, յուրաքանչյուր հանձնարարության կատարումից հետո թիմերը ստանալու են նոր հանձնարարություն եւ դրա ուղղությամբ աշխատելու են մինչեւ ավագանու հերթական նիստը: Իսկ կատարված աշխատանքների արդյունքները պարզ կդառնան երկու ամիսը մեկ խաղի ադմինիստրատիվ թիմի կողմից իրականացվող ավագանու անդամների աշխատանքի գնահատումից, որն իրականացվելու է հատուկ մշակված մեթոդաբանությամբ:

Որպեսզի խաղի մասնակիցներն ավելի լավ յուրացնեին

հանդիպման առաջին հատվածում տրված գիտելիքները եւ անձամբ ծանոթանալին համայնքապետարանի կառուցվածքին, միջոցառման երկրորդ մասում նրանք ուղեւորվեցին Մարտունու համայնքապետարան, հանդիպում ունեցան Մարտունի համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյանի հետ: Վերջինս իր խոսքում կարեւորեց երիտասարդների ներգրավվածությունը համայնքի ինքնակառավարմանը եւ ողջունեց մասնակիցների պատրաստակամությունը, ներկայացրեց համայնքապետարանի ընթացիկ աշխատանքները: Մասնակիցները հնարավորություն ունեցան նաեւ համայնքի ղեկավարին ուղղել համայնքի վերաբերյալ մի շարք հարցեր, բարձրաձայնել իրենց համար հրատապություն ունեցող խնդիրներ: Այնուհետեւ, համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամ Տիգրան Ստեփանյանի ներկայությամբ տեղի ունեցավ վիճակահանություն, որի արդյունքում յուրաքանչյուր խումբ պարզեց իր գործընկեր ավագանու անդամին:

Խաղի մեկնարկը տրված է եւ մասնակիցները պետք է մրցեն իրար հետ՝ իրենց համայնքում դրական փոփոխություն իրականացնելու գործում:

Սեփ.լր.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունների 121-րդ հոդվածի, մարզերը եւ համայնքները համարվում են ՀՀ վարչատարածքային միավորներ, իսկ 160-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն, կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է մարզպետների միջոցով: Այսինքն՝ ըստ այդ նորմի, մարզպետը (մարզպետարանը) համարվում է տարածքային կառավարման մարմին: Սակայն, մարզպետների՝ որպես տարածքային կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ որեւէ ամրագրում ՀՀ Սահմանադրությունում չկա:

ՀՀ-ում մարզպետների գործունեությունը եւ նրանց լիազորությունները սահմանված էին ՀՀ Նախագահի 06.05.1997թ. «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՅ-728 հրամանագրով, որը ուժը կորցրած է ճանաչվել 09.04.2018թ.:

Վերջերս ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը շրջանառության մեջ է դրել «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագիծը, որտեղ եւ պետք է սահմանվեն ու ամրագրվեն նաեւ մարզպետների լիազորությունները, գործառույթները:

Սեպտեմբերի 29-ին Հայաստանի համայնքների միությունը (ՀՀՄ) կազմակերպել էր «Տարածքային կառավարումը Հայաստանում» թեմայով քննարկում, որի առանցքում վերոնշյալ օրենքի նախագիծն էր: Ըննարկմանը մասնակցում էին ՀՀ տարբեր նախարարությունների, գերատեսչությունների, խորհրդարանական եւ արտախորհրդարանական քաղաքական ուժերի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, փորձագետներ, գործող եւ նախկին համայնքապետներ:

Ողջունելով մասնակիցներին՝ ՀՀՄ Նախագահ Էմին Երիցյանը նշեց. «ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արտագույնում ՀՀ օրենսդրությունում համընկավ Հայաստանում կատարվող արմատական փոփոխու-

ՕՐԵՆՔԻ ԲԱՑԵՐԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ըննարկվեց «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը



թյունների հետ, եւ սա նշանակում է, որ պետք է կառուցենք ոչ միայն Սահմանադրության պահանջով նոր որակական հարաբերություններ, այլ՝ ներկայիս հասարակական կյանքին համահունչ: Բոլորս էլ գիտենք, որ տարածքային կառավարման համակարգն իր պրակտիկ գործունեության առումով նախկինում էլ չէր համապատասխանում գործող օրենսդրությանը, այսօր էլ: Մենք խնդիր ունենք ձեւավորել տարածքային կառավարման նոր տեսլական, իսկ այդ խնդիրը քաղաքական է. ի՞նչ պետք է իրենից ներկայացնի տարածքային կառավարման համակարգը, ի՞նչ փոխհարաբերությունների մեջ պետք է գտնվի տեղական իշխանությունների հետ...»: Է. Երիցյանն այն համոզմանն է, որ Հայաստանում տնտեսական, տարածքային համաչափ զարգացման համար մարզպետարանների առկայությունն անհրաժեշտ է, բայց բոլորովին նոր պատկերացումներով՝ հիմնական գործառույթը պետք է լինի զարգացման ծրագրերի մշակումը, իրականացումը, բայց սա չպետք է աղերսներ ունենա վարչական կամ ֆինանսական վերահսկողության հետ:

Անդրադառնալով քննարկվող թեմային՝ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿՁՆ) տարածքային վարչության պետ Արթուր Սողոմոնյանը նշեց, որ շրջանա-



ռության մեջ դրված «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը կառուցվածքով նման է ՀՀ Նախագահի հրամանագրին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրամանագրում կային դրույթներ, որոնք մարզպետարանները ֆիզիկապես կամ այլ օրենքների շրջանակներում չեն իրականացրել, փորձ է արվել շտկել

այդ բացթողումները: Գործադիրի ներկայացուցիչը տեղեկացրեց, որ նշյալ օրենքի նախագիծը սահմանվում է, որ տարածքային կառավարման մարմինները պետք է լինեն ՏԿՁՆ ենթակա մարմիններ: Բախտոս անդրադարձավ նաեւ այն հանգամանքին, որ պետական կառավարման համակարգում օրենքով հստակեցված չէ մարզպետարանների տեղը, եւ առաջարկվել է, որ մարզպետարանները լինեն եւ գործեն ՏԿՁՆ ենթակայությամբ:

Փորձագետ Վահագն Պետրոսյանն էլ մանրամասնեց Հայաստանի համայնքների միության կողմից ներկայացված 15 առաջարկությունները, որոնց մի մասն արդեն ներառվել է քննարկվող օրենքի նախագիծում եւ հորդորեց լիազոր մարմինն՝ եւս մեկ անգամ ուշադրություն

պաշտպանվել եւ նախագահի հրամանագրի դրույթները, սակայն պետք է հաշվի առնել, որ իրականությունը փոխվել է, եւ տեղական ինքնակառավարման քաղաքացիական զարգացումներ են եղել, ընթացել են վարչատարածքային բարեփոխումներ, որոնք ինքնակառավարմանը եւ խոշորացված համայնքներին այսօր արդեն ունեն եւ իրականացնում են տարածքային կառավարման որոշակի գործառույթներ:

Վ. Շահբազյանը համոզմունք հայտնեց, որ Հայաստանում պետք է շարունակվի ինչպես վարչատարածքային բարեփոխումների, այնպես էլ լիազորությունների ապակենտրոնացման գործընթացը:

«Պետք է նկատի ունենալ, որ տեղական ինքնակառավարման համակարգի լիազորություններն ավելի շատնախու են, իսկ տարածքային կառավարման մարմինների լիազորությունները իրապես պետք է կրճատվեն այս օրենքի նախագիծում: Ավելի լավ է այսօր դրանք քիչ գրել, հետագայում՝ անհրաժեշտության դեպքում ավելացնել, քան թե նախատեսել լիազորություններ, որոնք ապակենտրոնացվելու են դեպի համայնքներ:

Պետք է ուժեղացնել տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ մարզպետարանների վրա աստիճանաբար ավելի քիչ լիազորություններ դնել», - ամփոփեց ՀՀՄ փորձագետը:

Ըննարկման ընթացքում հնչեցին նաեւ մի շարք այլ տեսակետներ, առաջարկներ մարզպետների, մարզպետարանների լիազորությունների, մարզպետարանների գործունեության վերաբերյալ, որոնք եւս քննարկման առարկա դարձան հանդիպման մասնակիցների կողմից:

ՀԱՍՄԻԿ ԵՐՐՈՒՅԱՆ

91-ԱՄՅԱ ԱՉԳԱՆՈՒՇ ՏԱՏԸ

Կարբիի մեծերի հիշարժան պատմությունները

Ազգանուշ տատը ծնվել է անցյալ դարի երկրորդ տասնամյակի վերջին: Այժմ 91 տարեկան է, ապրում է Կարբի գյուղում, առողջական վիճակից չի բողբոջում, միայն լսողությունն է ծանրացել: Եղել է իր հոր տան բազմազավակ ընտանիքի առաջնեկը, ապա հարս է եկել բազմազավակ ընտանիք ու եղել ավագ հարսը: Մանկության տարիներից ապրել է դժվար եւ հոգսառատ կյանքով, այնուհետեւ ամուսնացել է եւ իր ընտանիքի հոգսը շալակած շարունակել է ապրել՝ ուրիանալ ու տխրել ամեն եղած լավ ու վատից:

Ազգանուշ տատը ծնվել է Հովհաննավանք գյուղում: Նա եղել է տան ինը երեխաներից առաջինը: Յոթը քույր են եւ երկու եղբայր, որոնք էլ տան փոքրերն են եղել: Երբ Ազգանուշ տատը դարձել է յոթ-ութ տարեկան, սկսել է օգնել հորը տան բոլոր գործերում: Նա լավ ձայն է ունեցել, ցանկացել է երգել, բայց հայրը թույլ չի տվել, որ երգով զբաղվի: Այլ փոխարենը պարտավորված է եղել օգնել տան բոլոր գործերում:

Այն ժամանակներում էլ ամուսնությունները տարբեր կերպ են ստացվել՝ ոմանք սիրելով են ամուսնացել, ոմանք պատահական, ոմանք՝ ծնողների ցանկությամբ: Ազգանուշ տատի դեպքում եղել է պատահականությունը:

Գյուղում եղել է մեկ-երկու համայնքային աղբյուր, եւ յուրաքանչյուրը դուրեւրով է ջուրը տարել տուն: Արդեն 20 տարեկանում մի օր աղբյուրից ջուր տանելիս նրան է տեսնում իր ապագա ամուսնու քույրը եւ շատ է հավա-



նում կայտառ ու գեղեցիկ աղջկան: Այդ օրվանից հետո Ազգանուշը նկատում է, թե ինչպես է իր հետեւից ամեն անգամ գալիս մի երիտասարդ: Մի օր էլ նույն երիտասարդը, իր ծնողների հետ, գալիս է աղջկա ձեռքը խնդրելու: Ծնողները հավանություն են տալիս զավակների միասնությանը, պատրաստվում նշանորդել:

Ազգանուշ տատը պատմում է, որ նշանորդ է գալիս ընտանիքի հետ նաեւ քավորը: Բերում են այն ժամանակվան համապատասխան նվերներ՝ մոտ երեք մետր կտոր, մեկ մաշված ոսկուց մատանի եւ ականջօղ, իսկ համեմատաբար հարուստ քավորը տանում է մեկ գույգ կոշիկ, որը ցույց տալով նորից հետ է տանում, որպեսզի հարսանիքին նվեր տա:

Հետագայում Ազգանուշ տատը կորցնում է ականջօղերից մեկը, իսկ տարված կտորից ափսոսում է իրեն շոր կարել՝ պահելով որպես սեղանի սփռոց:

Մի քանի շաբաթ անց ամուսնացնում են: Հարսանիք են անում, առանց հարսի շորի, բայց եղել է դիւլ-գուռնա, երգ ու պար:

Քանի որ նրանք եղել են մեծ ընտանիք, մտածել են առանձնանալու, առանձին անկյուն ստեղծելու մասին: Կամաց-կամաց, քիչ-քիչ սկսել են կառուցել իրենց տունը, որքան երեխաներն ավելացել են, այնքան մեծացրել են սենյակները: Ամուսինը չափազանց աշխատասեր ու ժիր է եղել: Չնայած ժամանակի դժվարություններին՝ լավ է հոգացել ընտանիքի հոգսը:

Ազգանուշ տատը պատմում է, որ ավանակով, պարկերով դարման են տարել հարեւան ավելի հարուստ գյուղերը, վաճառել կամ փոխանակել իրենց անհրաժեշտ իրերով:

Իրենք էլ պահել են մեծացրել են յոթ երեխա՝ երեք տղա, չորս աղջիկ: Բոլորին էլ ամուսնացրել են, օգնել ինչով կարողացել են: Արդեն տասը տարի է, ինչ մահացել է ամուսինը: Հիմա էլ Ազգանուշ տատը ապրում է որդու, հարսի եւ թոռների հետ:

ՍՎԵՏԼԱՆԱ ՂՎԻՃՅԱՆ
asperez.am

«ԲՍԳ-ՆԵՐ. ԹԱՓԱՆՑԻԿ, ՅԱՇՎԵՏՈՒ ԵՎ ԲԱՂԱՔԱՑԻԱՄԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ». ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ



«Մարաթոնային կառավարման և զարգացման նախարարություն»

Սեպտեմբերի 27-ին Երեւանում կայացել է «Զաղաքացիների սպասարկման գրասենյակներ. թափանցիկ, հաշվետու եւ քաղաքացիամետ ծառայություններ» խորագիրը կրող միջազգային համաժողով, որին մասնակցել են 33 տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, ՀՀ-ում Գերմանիայի փոխդեսպան Կլաուս Վենդելբերգերը, Հարավային Կովկասում Շվեյցարիայի համագործակցության գրասենյակի տնօրեն Օլիվյե Բյուրկին, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիգերը, Գերմանիայի միջազգային համագործակցության ղեկավարության (GIZ, զՄՀԸ) հայաստանյան գրասենյակի տնօրեն Աննե Զեմփան, բարձրաստիճան պատվիրակություններ Վրաստանից, Ուկրաինայից եւ Սերբիայից, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանների, միջազգային կազմակերպու-

թյունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Համաժողովը կազմակերպել է Գերմանիայի միջազգային համագործակցության ղեկավարության (GIZ) կողմից իրականացվող «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ եւ Հայաստանում Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության եւ ԱՄՆ ՄԶԳ համաֆինանսավորմամբ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) հետ համատեղ: Համաժողովի նպատակն էր ներկայացնել եւ քննարկել համայնքապետարանների կողմից վարչական ծառայությունների մատուցման որակի բարելավման ու ստանդարտացման հնարավորությունները, ծառայությունների մշտադիտարկման ու

գնահատման գործիքներն ու մեխանիզմները: Համաժողովը հարթակ կհանդիսանա երկրների միջև փորձի ու գիտելիքի փոխանակման եւ հետագա համագործակցության համար: Սա երկրորդ միջազգային համաժողովն է՝ նվիրված քաղաքացիների սպասարկման գրասենյակների հիմնմանը, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման, ինչպես նաեւ ոլորտում միջազգային փորձի փոխանակ-

համայնքապետարաններում իրականացվող վարչական գործընթացները: Հայաստանում քաղաքացիների սպասարկման գրասենյակներում աշխատանքներն իրականացվում են Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) կիրառմամբ, որը որպես ՏԻՄ-երի համար մշակված տեղեկատվական համակարգ՝ թույլ է տալիս ապահովել տեղեկատվական հոսքերի ավտոմատացված կառավարում համայնքա-



«Մարաթոնային կառավարման և զարգացման նախարարություն»

պետարանում եւ նպաստում է մատուցվող ծառայությունների վրա ծախսվող ժամանակի կրճատմանը: Այն կապահովի համայնքային ծառայությունների մատուցումը «լավ կառավարման» սկզբունքների համաձայն: Համակարգի միջոցով հնարավոր է բնակիչներին մատուցել առցանց ծառայություններ, հետեւել դիմումների եւ գրությունների ընթացքին, իսկ հարցերի դեպքում՝ առցանց դիմել համապատասխան մասնագետներին: Վարչատարածքային բարեփոխումների շրջանակում ՀԿՏՀ-ն ապահովում է վարչական ծառայությունների մատուցում բնակիչներին անմիջապես բնակավայրերում, խոշորացված համայնքի արդյունավետ կառավարում, բնակավայրերի ինտեգրում եւ փոխգործակցություն մեկ միասնական տեղեկատվական միջավայրում: «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում հիմնվել են 35 քաղաքացիների սպասարկման գրասենյակներ Հայաստանի 8 մարզերում: Առաջիկա երկու ամիսների ընթացքում շահագործման կհանձնվեն եւս 5 գրասենյակներ: Այսպիսով, մինչ տարվեք Երեւանից դուրս բնակվող բնակչության գրեթե 40 տոկոսը հնարավորություն կունենա օգտվելու ՀՀ համայնքապետարանների կողմից մատուցվող որակյալ ծառայություններից:



«Մարաթոնային կառավարման և զարգացման նախարարություն»

մանը: Առաջին համաժողովը տեղի է ունեցել 2016թ. հոկտեմբերի 27-ին Երեւանում, որին նախորդել է հաջորդել եւ ճանաչողական այցեր եւ մասնակցություն Վրաստանում եւ Ուկրաինայում կայացած համաժողովներին: ԲՍԳ-ները թույլ են տալիս «մեկ պատուհան» սկզբունքի համաձայն քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություններ, բարձրացնել համայնքապետարանի աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, դյուրացնել



Սեպտեմբերի 26-ին Ջրվեժ համայնքում տեղի է ունեցել Զաղաքացիների սպասարկման գրասենյակի

(ԶՍԳ) պաշտոնական բացման արարողությունը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ տարածքային կառավար-

ՆՈՐ ԲՍԳ՝ ԶՐՎԵԺՈՒՄ

ման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մաթիաս Զիլբերը, ՀՀ-ում Շվեյցարիայի Համադաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Ստեֆանո Լազզարոտտոն, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիգերը, Գերմանիայի միջազգային համագործակցության ղեկավարության (զՄՀԸ) հայաստանյան գրասենյակի տնօ-

րեն Աննե Զեմփան, «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի հայաստանյան թիմի ղեկավար Զաթրին Շեֆերը, ՀՀ Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը, Ջրվեժ համայնքի ղեկավար Ռոբերտ Պետրոսյանը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ինչպես նաեւ բարձրաստիճան պատվիրակություններ Վրաստանից, Ուկրաինայից եւ Սերբիայից: Գրասենյակը հիմնվել է զՄՀԸ կողմից իրականացվող «Լավ տեղական ինքնակառավարում

Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ եւ Հայաստանում՝ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) եւ ԱՄՆ ՄԶԳ համաֆինանսավորմամբ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) հետ համատեղ:

Luun mtad.am-ի



«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթ
Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Համայնքների
ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրասենյակի վկայական՝
թիվ 03U063471,
տրված՝ 06. 02. 2004 թ.

Թերթը իրատարակվում է Ամերիկայի
ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
զարգացման գործակալության
օժանդակությամբ իրականացվող «Հանրային
մասնակցություն տեղական
ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի
շրջանակներում: Այստեղ արտահայտված
տեսակետները միմյան հեղինակներին են եւ
պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ
կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ
ՎԱՅՆ ՄՈՎՍԻՅԱՆ
ՎԱՅՐԱՄ ՇԱՀԱԶՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՒՐԻՆ ՆԱՎԱՍՏՐԳՅԱՆ
ՀՈՒՓՈՒՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԸՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՈՒԿՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՅԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝
Խմբագիր
ԱՐԵՎԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երեւան, Երվանդ Բոջարի 20,
4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ. փոստ՝ info@cfomail.am
Կայք՝ http://cfomail.am/
Տպագրված է «Տիգրան Մեծ»
իրատարակչության տպարանում,
ք. Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: